

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՆՈՒՐՔՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ կառավարության և անձամբ իմ անունից լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Ձեր ծննդյան հիսնամյակը: Մենք բարձր ենք գնահատում Ձեր հայրենասիրական գործունեությունը և խաղաղության համար տարվող պայքարին Ձեր մատուցած ծառայությունները: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր այդ գործունեության մեջ:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Միության Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի և անձամբ իմ անունից ողջունում եմ Ձեզ Ձեր ծննդյան հիսնամյակի առթիվ և հղում լավագույն բարեմաղթություններ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հաջողություններ Հայ եկեղեցու կողմից խաղաղության ամրապնդման և ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման գործում մղվող պայքարում:

ՊՈՒԶԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՄՈՍԿՎԱ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Հովվապետ և եղբայր Մեր ի Քրիստոս.

Հաճեցեք ընդունել Մեր ամենասրտագին բարեկամական բարեմաղթությունները Ձեր ծննդյան հիսնամյակի առթիվ: Ցանկանում ենք բազում տարիներ, երջանիկ կյանք և բեղմնավոր գործունեություն՝ ի փառս Ս. Եկեղեցու:

Անկեղծ սիրով Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

ՄՈՍԿՎԱ

Անձամբ Մեր և Բուլղար եկեղեցու Սրբազան Սինոդի անունից եղբայրաբար և ի սրտե ողջունում ենք Ձերդ Սրբության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը: Աղոթում ենք առ Քրիստոս Աստված՝ բաշխելու Իր ողորմությունը Ձեր քաջառողջության և բարենաթող գործունեության համար՝ ի պայծառություն Ձեր Ս. եկեղեցու:

ԿԻՐԻԼ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻՈ

ՍՈՖԻԱ

Վենիդ օծման երրորդ տարեդարձի առիթով ընդունեցեք ամենուս ջերմագին շնորհավորանքն ու սրտագին մաղթանքները Ձեր կյանքի արևշատության և Ձեր բոլոր եկեղեցանվեր ձեռնարկներուն ու ծրագիրներուն հաջողության համար:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Ձեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ խոնարհ շնորհավորություններ: Կաղոթենք Տիրոջ մեր եկեղեցվո խաղաղության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Ձեր բոլոր գավակներուն հավատարմության համար:

Երկար կյա՜նք և աստվածային օգնությո՜ւն Ձերդ Սրբության:

Խորին հարգանքով՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

ԲՐՅՈՒՍԵԼ

Ձերդ Սրբության ծննդյան հիսնամյակի առթիվ հաճելի պարտականություն ունենք սրտագին ողջունելու Ձեզ և աղոթագին մաղթելու աստվածային օրհնություն: Կամենում ենք Ձեզ արևշատություն, քաջառողջություն ու հոգեկան կարողություններ՝ Ձեր հովվապետական բեղմնավոր գործունեության ասպարեզում:

ՅԱՆ ԿԻՅՎԻՏ
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Ձեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ մեր ամենաջերմ մաղթանքները Ձեր առաքելության շարունակության համար:

Խորին հարգանքներով՝
ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԼԻՍԱԲՈՆ

Ձեր ծննդյան հիսնամյակի ուրախ առիթով, ջերմագին շնորհավորում եմ Ձեզ Սրբությանը:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և երջանկություն:

Լավագույն բարեմաղթություններով՝

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով ստացվել են հարյուրավոր շնորհավորական հեռագրեր, գրություններ՝ անայլայլ հարգանքի և սիրո զգացմունքներով և հոբելյար Հայրապետի արևաշատ կյանքի ու բազմարդյուն գործունեության սրտագին մաղթանքներով՝ թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական իշխանություններից, արվեստի, գրականության ներկայացուցիչներից, հայրենակցական միություններից, երիտասարդական կազմակերպություններից, ազգային և օտար ծանոթ դեմքերից:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ի պաշտոնե լիազորված է ամենաջերմ շնորհակալություն հայտնել Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առիթով ստացված բոլոր շնորհավորական հեռագրերի և գրությունների համար: